«Ամերիաբանկ» ՓԲԸ
+37410 561111, office@ameriabank.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 08.07.2015թ. թիվ 03/17/15 որոշմամբ,
ընթացիկ խմբագրությունը՝ 22.03.2023թ. թիվ 01/33/23 որոշմամբ, և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:

Սահմանումներ

Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Բանկի հիմնական պայմաններ՝ Բանկի կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ[1], Բանկի կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ[2]:

Բանկի սակագներ՝ Բանկի սակագները ֆիզիկական անձ հաճախորդների համար[3], Բանկի սակագները իրավաբանական անձ հաճախորդների համար[4], Բանկի քարտերի սակագներ[5], Բանկի մաքսային քարտի սակագներ[6], Բանկի Բիզնես քարտերի սակագներ[7], Բանկի նվեր քարտերի տրամադրման և սպասարկման պայմաններ[8], ինչպես նաև Բանկի կողմից իրականացվող քարտային արշավների և համատեղ քարտային ծրագրերի համար Բանկի կողմից հաստատված սակագներ և պայմաններ:

---

[1] «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (11RBD RL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[2] «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (11RBD/12CIB RL 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[3] «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար (11RBD PL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[4] «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ իրավաբանական անձ հաճախորդների համար (12CIB/11RBD PL 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 20.05.2015թ. թիվ 03/11/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[5] «Ամերիաբանկ» ՓԲԸ Քարտերի սակագներ» (11RBD PL 72-56), ընդունվել է Բանկի Տնօրինության 29.07.2015թ. թիվ 02/20/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[6] «Ամերիաբանկ» ՓԲԸ Մաքսային քարտերի սակագներ (12CIB PL 72-48), ընդունվել է Բանկի Տնօրինության 08.04.2011թ. թիվ 35/07/11 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[7] «Ամերիաբանկ» ՓԲԸ Բիզնես քարտերի սակագներ (12CIB PL 72-54), ընդունվել է Բանկի Տնօրինության 27.06.2013թ. թիվ 24/19/13 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[8] «Ամերիաբանկ» ՓԲԸ Նվեր քարտերի տրամադրման և սպասարկման պայմաններ (11RBD PL 72-51), ընդունվել է Բանկի Տնօրինության 28.09.2011թ. թիվ 113/09/11 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

վճարային քարտ (այսուհետ՝ նաև քարտ)՝ Բանկի կողմից թողարկված՝ VISA, MasterCard միջազգային վճարային համակարգերի, Արմենիան Քարդ (այսուհետ՝ ArCa կամ ԱրՔա) վճարային համակարգի վճարային գործիք:

վճարային համակարգ(եր)՝ Բանկի կողմից թողարկված վճարային քարտերը սպասարկող վճարային համակարգ (VISA, MasterCard, ArCa և այլն (առկայության դեպքում)):

Քարտապան՝ 14 (տասնչորս) տարեկանից բարձր տարիքի ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ով/որն օգտագործում է Բանկի կողմից տրամադրված վճարային քարտ, կամ դիմել է Բանկ քարտ ստանալու նպատակով:

հավելյալ քարտ՝ հիմնական քարտին կից տրամադրված քարտ, որը տրվում է Քարտապանի (Հիմնական քարտապան) դիմումի համաձայն Հիմնական քարտապանի կամ երրորդ անձի (Հավելյալ քարտապան) անունով, և նախատեսված է հիմնական քարտային հաշվին առկա միջոցներով գործարքներ կատարելու համար:

Ստիկեր (Visa Pay Sticker)՝ Visa միջազգային վճարային համակարգի անհպում տեսակի հավելյալ քարտ է, որը կցվում է հիմնական՝ Visa կամ Mastercard քարտերին՝ բացառությամբ Gift և Business տեսակի քարտերի և թվային քարտերի:

թվային քարտ՝ Visa միջազգային վճարային համակարգի առանց ֆիզիկական կրիչի թողարկվող Visa Digital վիրտուալ քարտ, որը Քարտապանին հասանելի է Ինտերնետ բանկ / մոբայլ բանկինգ համակարգում, և որի միջոցով հնարավոր է իրականացնել անկանխիկ քարտային գործարքներ:

քարտային հաշիվ՝ Քարտապանի անունով բացված և Բանկի հիմնական պայմանների և սույն Պայմանների համաձայն վարվող բանկային հաշիվ, որը կցվում է քարտին:

ArCa առցանց վճարային համակարգ՝ ArCa վճարային համակարգի կողմից տրամադրվող վիրտուալ քարտի ստեղծման, վարման և առցանց վճարումների համակարգ, որը հասանելի է arca.am ինտերնետային կայքի կամ հավելվածի միջոցով:

Անհատական նույնականացման համար (այսուհետ՝ PIN կոդ)՝ Քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտային վճարային համակարգերի կանոններով նախատեսված դեպքերում քարտով գործարքներ կատարելիս:

մեկանգամյա գաղտնաբառ (այսուհետ՝ նաև OTP)՝ Բանկի և/կամ վճարային համակարգերի կողմից սահմանված դեպքերում Քարտապանի կողմից քարտի ակտիվացման, PIN կոդի ստեղծման, քարտային գործարքների, քարտի հետ կապված այլ գործողությունների կատարման ժամանակ որպես նույնականացման և հավաստագրման միջոց Քարտապանի՝ Բանկում գրանցված կոնտակտային տվյալներով ուղարկվող և Քարտապանի կողմից մուտքագրման ենթակա մեկանգամյա կիրառման գաղտնաբառ:

քարտի գաղտնաբառ՝ Քարտապանի անձը նույնականացնող ծածկագիր, որը գեներացվում և տրամադրվում է հաճախորդին Բանկի կողմից սահմանված կարգով և կիրառվում է Քարտապանի կողմից քարտի և քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ArCa առցանց վճարային համակարգում վիրտուալ քարտ ստեղծելու համար, Բանկի կողմից սահմանված դեպքերում՝ քարտի սպասարկման հետ կապված հարցերով հեռախոսակապի միջոցով Բանկ դիմելու, ինչպես նաև Բանկի և ArCa վճարային համակարգի կողմից սահմանված այլ դեպքերում:

CVV/CVC կոդ՝ Քարտապանին նույնականացնող կոդ, որը կիրառվում է Քարտապանի կողմից ինտերնետ միջավայրում գործարքներ կատարելիս: CVV/CVC կոդը նշված է քարտի դարձերեսին, իսկ թվային քարտի դեպքում այն ուղարկվում է Քարտապանին Բանկի կողմից սույն Պայմանների համաձայն՝ sms հաղորդագրության միջոցով:

առևտրի/սպասարկման կետ՝ ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման կետ, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում, որի կողմից վաճառվող ապրանքների և (կամ) մատուցվող ծառայությունների դիմաց հնարավոր է վճարել քարտի միջոցով:

ավտոմատ գանձման մեքենա (այսուհետ՝ բանկոմատ կամ ԱԳՄ)՝ գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ ինքնասպասարկող սարք:

POS տերմինալ՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է առևտրի/սպասարկման կետում անկանխիկ կամ բանկի տարածքում վճարային քարտով անկանխիկ և կանխիկացման գործառնություններ կատարելու համար:

գործարք՝ Քարտապանի կողմից Բանկին տրված հանձնարարական քարտի ուղղակի կամ անուղղակի օգտագործմամբ գործառնություն կատարելու վերաբերյալ:

հավաստագրում՝ քարտով գործարքի կատարման համար Բանկի կողմից տրվող թույլտվություն կամ հաստատում:

գործարքի կատարման օր՝ քարտով գործարքը կատարելու փաստացի օր:
գործարքի հաշվառման օր՝ քարտը սպասարկող վճարային համակարգի կողմից գործարքը Բանկի հաշվառմանը ներկայացնելու կամ Քարտապանի հանձնարարականը կատարելու հիմքով՝ Բանկի կողմից քարտային հաշվով գործարքը հաշվառելու օր:
անհպում վճարում (contactless payment)՝ անհպում տեխնոլոգիայի կիրառմամբ քարտային վճարում:
Stop-ցուցակ՝ միջազգայնորեն գործող ցուցակ, որում ներառված քարտերի համար վճարային համակարգերի կանոններով նախատեսված է, որ գործարքները կատարվում են միայն հավաստագրման հիման վրա:
վճարային սահմանաչափ՝ քարտով գործարքների կատարման համար սահմանված սահմանաչափ, որը կազմում է քարտային հաշվի մնացորդի և վարկային գծի, այդ թվում՝ օվերդրաֆտի հանրագումարը:
գերածախս՝ քարտի վճարային սահմանաչափից ավել օգտագործված՝ ներառյալ Բանկի սակագների համաձայն Բանկի կողմից գանձված գումար, որը համարվում է Քարտապանի պարտավորությունը Բանկի նկատմամբ:
քարտային փաթեթ՝ Բանկի կողմից որոշակի տեսակի քարտերի հետ տրամադրվող լրացուցիչ ծառայություններ, որոնք սահմանվում են Բանկի սակագներով:
քաղվածք՝ Բանկի կողմից Քարտապանին տրամադրվող հաշվետվություն՝ քարտային հաշվով (ներառյալ հիմնական և հավելյալ քարտերով, Ստիկերներով) կատարված գործառնությունների վերաբերյալ:
գրավոր՝ Քարտապանի կողմից ստորագրված կամ Բանկի և Քարտապանի միջև համաձայնեցված՝ Քարտապանի ստորագրությանը հավասարեցված այլ եղանակով (ինտերնետ/մոբայլ բանկինգ, հեռախոս-բանկ և այլն) հավաստագրված կամ Բանկի համար ընդունելի և նույնականացման հնարավորություն ապահովող էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով հանձնարարարության կամ տեղեկատվության ներկայացման եղանակ:
ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն:
աշխատավարձային նախագիծ՝ գործատուի՝ Բանկի միջոցով աշխատավարձ ստացող աշխատակիցների քարտերի և մյուս բանկային ծառայությունների տրամադրման և սպասարկման հատուկ սակագներ և պայմաններ:
ուսանողական նախագիծ՝ ուսումնական հաստատության հետ համագործակցություն, որի շրջանակներում վերջինիս ուսանողներին Բանկը տրամադրում է Ուսանողական քարտեր՝ համաձայն Բանկի «Քարտերի սակագների»[5]:
սառեցում՝ քարտի/քարտային հաշվի կամ դրանում առկա միջոցների տնօրինման սահմանափակում:
պահատուփ (նաև՝ լոքեր)՝ Բանկի գործընկերոջ կողմից տրամադրվող պահատուփ/պահախցիկ (locker), որը Քարտապանի նախընտրության դեպքում ծառայում է որպես տարածք Քարտապանին քարտն առաքելու համար:
MyAmeria համակարգ՝ սույն Պայմանների իմաստով Բանկի ինտերնետ բանկ/մոբայլ բանկինգ ծառայության առանձնացված տարբերակ:
Կոնսիերժ ծառայություն՝ Բանկի սակագների համաձայն որոշ քարտատեսակների հետ Քարտապանին տրամադրվող հավելյալ ծառայություն՝ հաղորդակցման հավելվածների (viber, whatsapp, telegram) միջոցով օգտագործվող միջազգային վիրտուալ օգնականի (chat-bot) տեսքով, որը շուրջօրյա հասանելի է Քարտապանին՝ վերջինիս տարաբնույթ խնդիրների/առաջադրանքների լուծման համար:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բանկի վճարային քարտերի սպասարկման պայմանները և օգտագործման կանոնները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են Բանկի կողմից քարտի տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի միջև փոխհարաբերությունների հիմնական պայմանները և քարտի օգտագործման կանոնները:

1.2. Բանկը հաճախորդին տրամադրում է քարտ՝ Բանկի սահմանած ձևանմուշով հաճախորդի Բանկ ներկայացրած հայտ-պայմանագրի (այսուհետ՝ Հայտ-պայմանագիր կամ քարտի պատվիրման հայտ) հիման վրա, որով հաճախորդը հաստատում է Պայմանների ընդունումը (ակցեպտավորումը): Թվային քարտի Հայտ-պայմանագիրը հաճախորդը ներկայացնում է Բանկ՝ MyAmeria համակարգի միջոցով:

1.3. Հայտ-պայմանագրում ուղղակիորեն նշված՝ քարտի պայմանների հետագա փոփոխությունների մասին, բացառությամբ այն փոփոխությունների, որոնք Պայմանների համաձայն չեն կարող կատարվել քարտի

գործողության ընթացքում, Քարտապանի հանձնարարականը ներկայացվում է Բանկի սահմանած ձևանմուշով, և այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչ այդ նույնանման հարցին վերաբերող հանձնարարականները համարվում են ուժը կորցրած: Պայմանների իմաստով՝ Հայտ-պայմանագրով ներկայացված հանձնարարականներն ու ընտրված պայմանները կիրառելի են դրանց հետագա բոլոր փոփոխություններով:

1.4. Պայմանները գործում են ի լրումն Բանկի հիմնական պայմանների, ընդ որում՝ Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Բանկի հիմնական պայմաններով, Բանկի սակագներով, Բանկի և Քարտապանի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

1.5. Բանկը թողարկում է ինչպես ֆիզիկական կրիչով քարտեր, այնպես էլ թվային քարտեր:

1.6. Պայմանների բոլոր դրույթները վերաբերում են նաև թվային քարտերին, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան դրույթում կամ Բանկի սակագներում, կամ այլ բան չի բխում Պայմանների կամ Բանկի սակագների առանձին դրույթի բովանդակությունից: Թվային քարտը պարունակում է բոլոր տվյալները, ինչ ֆիզիկական կրիչով քարտը, այն է՝ քարտի համար, Քարտապանի անուն, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ: Թվային քարտի համար չի կիրառվում PIN կոդ:

1.7. Ֆիզիկական կրիչով քարտը կարող է լինել անհպում տեսակի: Անհպում քարտով հնարավոր է կատարել անհպում վճարումներ: Անհպում քարտի վրա առկա է համապատասխան նշան, ինչպես ներկայացված է ստորև[9]:

1.8. Առանձին տեսակի քարտերի, Բանկի կողմից իրականացվող քարտային արշավների, համատեղ քարտային ծրագրերի համար Բանկի կողմից սահմանված առանձին պայմանները, սակագները և (կամ) պայմանագրերը գործում են ի լրումն սույն Պայմանների և դրանցում կարող են սահմանվել սույն Պայմաններից տարբեր պայմաններ և (կամ) սահմանափակումներ:

1.9. Առանձին տեսակի քարտերի համար Բանկը կարող է կիրառել ապահովագրություն, որի իրականացման, ինչպես նաև ապահովագրական հատուցումների ստացման կարգն ու պայմանները սահմանվում են Բանկի «Քարտերի ապահովագրության պայմաններով»[10], որոնք գործում են ի լրումն սույն Պայմանների:

1.10. Քարտով դրամական միջոցների, այդ թվում՝ վարկային միջոցների շարժը (մուտքագրումներ, ելքագրումներ), կանխիկ և անկանխիկ եղանակով օգտագործումը իրականացվում է համաձայն Պայմանների և ArCa, VISA, MasterCard վճարային համակարգերի կողմից սահմանված պայմանների և կանոնների:

1.11. VISA և MasterCard վճարային համակարգերի կողմից համապատասխան քարտատեսակների համար սահմանվող արտոնությունները, հնարավորությունները, հավելյալ ծառայությունները, այդ թվում դրանց գծով գանձվող վճարները, սահմանափակումները կարգավորվում են Պայմաններով և վճարային համակարգերի կողմից սահմանված պայմաններով և կանոններով, որոնք հասանելի են հետևյալ հղումներով՝ https://cis.visa.com/ru_TJ/visa-in-armenia.html, https://www.mastercard.am/en-am.html:

1.12. Քարտով, ինչպես նաև առկայության դեպքում՝ հավելյալ քարտ(եր)ով կատարվող գործարքների համար միջոցների շրջանառությունը ապահովելու նպատակով Բանկը վարում է քարտային հաշիվ:

1.13. Քարտային հաշիվը բացվում է Հիմնական քարտապանի անունով:

1.14. Քարտային հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով:

9

[10] «Ամերիաբանկ» ՓԲԸ Քարտերի ապահովագրության պայմաններ (11RBD RL 72-01-08), ընդունվել է Բանկի Տնօրինության 17.06.20թ. թիվ 01/16/20 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

1.15. Քարտի տրամադրման համար Բանկում ՀՀ դրամով ընթացիկ հաշվի առկայությունը պարտադիր է, բացառությամբ աշխատավարձային նախագծերի և ուսանողական նախագծերի ներքո տրամադրվող քարտերի:

1.16. Քարտը վավեր է մինչև քարտի վրա նշված՝ քարտի գործողության ժամկետի համապատասխան ամսվա վերջին օրը ներառյալ:

1.17. Ֆիզիկական կրիչով թողարկվող քարտը Բանկի սեփականությունն է և Բանկի պահանջով պետք է վերադարձվի Բանկ:

1.18. Արգելվում է օգտագործել քարտը անօրինական նպատակներով:

1.19. Պայմաններում սահմանված կանոնների և պահանջների խախտումով՝ քարտով կատարված գործարքների, ինչպես նաև քարտի, PIN կոդի, քարտի հետ կապված՝ Քարտապանին տրամադրվող ցանկացած ծածկագրված տվյալի (QR կոդ, մեկանգամյա գաղտնաբառ և այլն), քարտի գաղտնաբառի, քարտի տեղեկատվության (քարտի համար, Քարտապանի անուն, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ և այլն) օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

1.20. Քարտային փաթեթի, քարտի հետ կապված այլ լրացուցիչ ծառայությունների տրամադրման դեպքում Բանկն իրավասու է առանց Քարտապանին նախապես տեղեկացնելու այդ ծառայությունները մատուցող՝ Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին տրամադրել Քարտապանի անհատական տվյալները (անուն, ազգանուն/ անվանում, ծննդյան տարեթիվ, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, հաղորդակցման տվյալներ):

1.21. Քարտապանը (բացառությամբ նվեր և բիզնես քարտերի քարտապանների) հանդիսանում է Այո (AYO) ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասնակից, որի շրջանակներում իրականացվում է Ծրագրի գործընկեր կազմակերպությունների առևտրի/սպասարկման կետերում Քարտապանի կողմից քարտով կատարված անկանխիկ վճարումների դիմաց հետվճար (վճարված գումարի մասնակի վերադարձ): Ծրագիրն իրականացվում է «Բեստ Քարդ» ՍՊԸ կողմից՝ համաձայն «AYO ծրագրին մասնակցության պայմանների», որը հասանելի է «Բեստ Քարդ» ՍՊԸ կայքէջում (www.ayocard.am): Քարտապանը սույն Պայմանների համաձայն տալիս է իր համաձայնությունը միանալու «AYO ծրագրին մասնակցության պայմաններին», որը հանդիսանում է հրապարակային օֆերտա, և սույն Պայմաններն ընդունելով՝ միաժամանակ ակցեպտավորում է այն:

1.22. Կոնսիերժ ծառայությունն ակտիվացվում է մեկ անգամ, և յուրաքանչյուր քարտի համար այն ակտիվացնելու անհրաժեշտություն չկա: Ակտիվացման պահից այն հասանելի է Քարտապանին գործող քարտ ունենալու դեպքում: Կոնսիերժ ծառայության ապաակտիվացման համար Քարտապանը պետք է դիմի Բանկ:

1.23. Կոնսիերժ ծառայության մանրամասներին և հնարավորություններին կարելի է ծանոթանալ Բանկի և վճարային համակարգերի կայքէջերում: Ավելի մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Visa վճարային համակարգի կայքէջում, հետևյալ հղումով՝ https://cis.visa.com/Visa Concierge:

1.24. Հավելյալ քարտի համար Կոնսիերժ ծառայությունը չի գործում:

1.25. Քարտի հետ կապված հարցերով կամ տեղեկատվության տրամադրման համար Քարտապանի կողմից հեռախոսակապի միջոցով Բանկի հետ կապ հաստատելու համար գործում է Բանկի՝ (+374-10) 56 11 11 և (+374-12) 561111 շուրջօրյա հեռախոսահամարները:

1.26. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո քարտը Բանկի կողմից վերաթողարկվում է Բանկում այդ պահին գործող սակագների և պայմանների համաձայն, բացառությամբ եթե քարտի գործողության ժամկետի ավարտից առնվազն 10 (տասը) օր առաջ Քարտապանը գրավոր տեղեկացրել է Բանկին քարտից հրաժարվելու մասին, քարտը բլոկավորված է, Քարտապանն ունի քարտի հետ կապված Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ, կամ Բանկը որոշում է կայացրել չվերաթողարկել քարտը:

1.27. Քարտապանը կարող է քարտի գործողության ընթացքում իր հայեցողությամբ փոխել PIN կոդը՝ համապատասխան հնարավորությամբ բանկոմատի միջոցով: PIN կոդի փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել գործող և նոր PIN կոդերը: PIN կոդը փոխելիս անհրաժեշտ է հետևել Բանկի կողմից սահմանված անվտանգության կանոններին, որոնք հրապարակվում են Բանկի կայքում կամ ծանուցվում են Քարտապանին:

1.28. PIN կոդը մոռանալու դեպքում Քարտապանը կարող է Բանկի կողմից սահմանված ձևանմուշով կամ Բանկի համար ընդունելի եղանակով համապատասխան հանձնարարական ներկայացնելու միջոցով OTP-ի կիրառմամբ ինքնուրույն սահմանել նոր PIN կոդ կամ վերաթողարկել քարտը՝ համաձայն Բանկի սակագների:

1.29. Բանկի կայքէջում օնլայն ծառայությունների համար ստեղծված համակարգերում Բանկի կողմից սահմանված դեպքերում և կարգով ծառայությունների տրամադրման և Քարտապանին նույնականացման համար Քարտապանից կարող է պահանջվել մուտքագրել քարտի տվյալները:

2. Քարտի տրամադրում

2.1. Պայմանների՝ քարտի տրամադրման վերաբերյալ կետերը վերաբերում են նաև PIN կոդի տրամադրմանը բոլոր այն դեպքերում, երբ PIN կոդը ենթակա է Քարտապանին տրամադրման Բանկի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմաններով:

2.2. Ֆիզիկական կրիչով քարտը և PIN կոդը Քարտապանին տրամադրվում են առանձին՝ փակ ծրարներով:

2.3. Քարտը Քարտապանին տրամադրվում է Բանկի և Քարտապանի միջև համաձայնեցված եղանակով: Թվային քարտը տրամադրվում է Քարտապանին՝ վերջինիս Ինտերնետ բանկ / մոբայլ բանկինգ համակարգում այն հասանելի դարձնելու միջոցով:

2.4. PIN կոդը Քարտապանի նախընտրությամբ կարող է սահմանվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝ համաձայն քարտի պատվիրման հայտի՝

2.4.1. PIN կոդը ձևավորվում և տրամադրվում է Քարտապանին Բանկի կողմից,

2.4.2. PIN կոդը ձևավորվում է Քարտապանի կողմից:

Ընդ որում, պահատուփի միջոցով քարտի տրամադրման դեպքում PIN կոդը ենթակա է սահմանման Քարտապանի կողմից:

2.5. Պայմանների համաձայն՝ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Բանկի կողմից վերաթողարկված քարտի համար PIN կոդը ենթակա է սահմանման Քարտապանի կողմից:

2.6. Քարտի տրամադրման գործընթացը կազմակերպվում է քարտի պատվիրման հայտը Քարտապանի կողմից Բանկ ներկայացնելուց հետո.

2.6.1. 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի գլխամասային գրասենյակի կամ երևանյան որևէ մասնաճյուղի տարածքում կամ Երևանում գտնվող պահատուփի միջոցով տրամադրելու դեպքում,

2.6.2. 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղի տարածքում տրամադրելու դեպքում,

2.6.3. 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող պահատուփի միջոցով տրամադրելու դեպքում:

Բանկի սակագներով սահմանված դեպքերում քարտը կարող է տրամադրվել ավելի կարճ ժամկետում:

2.7. Քարտի առաքման համար Քարտապանի կողմից տրամադրված հասցեով (այսուհետ՝ քարտի առաքման հասցե) առաքման եղանակով քարտը տրամադրելու դեպքում առաքման ժամկետը պայմանավորված է առաքման ծառայություններ մատուցող ընկերությունների պայմաններով: Թվային քարտը Քարտապանին հասանելի է դառնում (ակտիվացվում է) քարտի պատվիրման հայտը Քարտապանի կողմից Բանկ ներկայացվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

2.8. PIN կոդը Քարտապանի կողմից սահմանվելու դեպքում OTP-ն SMS հաղորդագրությամբ ուղարկվում է Քարտապանի՝ Բանկին նախօրոք գրավոր տրամադրված բջջային հեռախոսահամարին Քարտապանի կողմից բանկոմատի միջոցով քարտն ակտիվացնելու համապատասխան հրահանգները կատարելու գործընթացում: Ստացված OTP-ն Քարտապանի կողմից պետք է մուտքագրվի բանկոմատի համապատասխան դաշտում, որից հետո Քարտապանը կարող է ինքնուրույն սահմանել PIN կոդը: PIN կոդը կարող է սահմանվել քարտը սպասարկող վճարային համակարգի մասնակից հանդիսացող բանկի բանկոմատի միջոցով, եթե տվյալ բանկոմատը հագեցած է համապատասխան տեխնիկածրագրային լուծումներով: PIN կոդը Քարտապանի կողմից

սահմանելու գործընթացի բարեհաջող իրականացման անհնարինության, այդ թվում՝ սահմանված ժամկետում OTP-ն չստանալու դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:

2.9. Քարտի PIN կոդը Քարտապանի կողմից՝ OTP-ի կիրառման միջոցով սահմանելու տարբերակով քարտը թողարկելուց հետո տվյալ քարտի PIN կոդի ստացման նախընտրելի եղանակը չի կարող փոխվել: Նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, այդ թվում՝ եթե տեխնիկական պատճառներով Քարտապանը չի ստացել OTP-ն, և տեխնիկական պատճառը չի վերացվել, քարտը ենթակա է վերաթողարկման՝ PIN կոդը Բանկի կողմից տրամադրման տարբերակով:

2.10. Քարտը ստանալուն/հասանելի դառնալուն պես Քարտապանը պետք է ստուգի քարտի տեղեկատվության համապատասխանությունը քարտի պատվիրման հայտին, ծրարի փակ և անվնաս լինելը, քարտի և PIN կոդի (վերջինս Բանկի կողմից տրամադրվելու դեպքում) առկայությունը ծրարում, ինչպես նաև քարտի վրա նշված տվյալների ճշտությունը: Քարտապանի կողմից ցանկացած անհամապատասխանության հայտնաբերման դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:

2.11. Քարտի պատվիրման կամ քարտի վերաթողարկման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում քարտը (ներառյալ՝ Պայմաններում նշված պատճառներով առաքումից վերադարձված քարտերը) Քարտապանի կողմից չստանալու դեպքում Բանկն իրավասու է փակել և ոչնչացնել քարտը:

2.12. Քարտը առաքման եղանակով տրամադրելու դեպքում քարտը և PIN կոդը Քարտապանին ուղարկվում են առանձին՝ առաքման ծառայություններ մատուցող տարբեր ընկերությունների կամ տարբեր առաքիչների միջոցով, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի և Քարտապանի միջև:

2.13. Բանկի տարածքում քարտի ստացման համար միջնորդավճարը սահմանվում է համաձայն Բանկի սակագների: Քարտի առաքման համար Բանկը սահմանում է ծախսերի փոխհատուցման պայմաններ համաձայն Բանկի սակագների:

2.14. Քարտը և PIN կոդը քարտի առաքման հասցեով առաքելու դեպքում դրանք կարող են տրամադրվել այդ հասցեում գտնվող/բնակվող ցանկացած անձի, և այդ դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում քարտի տրամադրումից և դրա հետագա օգտագործումից բխող Քարտապանի հնարավոր կորուստների և վնասների համար: Եթե Քարտապանը նախընտրում է, որ քարտը տրամադրվի անձամբ իրեն, ապա որպես քարտի ստացման նախընտրելի եղանակ՝ չպետք է ընտրի սույն կետում նշված առաքման տարբերակը:

2.15. Եթե քարտի առաքման հասցեով առաքման արդյունքում հնարավոր չի եղել ապահովել քարտի և (կամ) PIN կոդի՝ համաձայն Պայմանների տրամադրումը, ինչպես նաև եթե քարտի պատվիրման հայտում ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական հասցե նշված լինելու պատճառով հնարավոր չի եղել իրականացնել առաքում, ապա դրանք վերադարձվում են Բանկ / պահվում են Բանկում, և Քարտապանը կարող է ստանալ քարտը Բանկի տարածքում:

2.16. Եթե քարտը տրամադրվում է պահատուփի միջոցով առաքման եղանակով, Քարտապանն իրավասու է այն ստանալ պահատուփից քարտը ստանալու համար անհրաժեշտ QR թվային կոդը Քարտապանին SMS հաղորդագրությամբ ուղարկվելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետում քարտը պահատուփից չստանալու դեպքում, ուղարկված QR կոդն ուժը կորցրած է ճանաչվում, իսկ քարտը վերադարձվում է Բանկ, որից հետո Քարտապանը կարող է ստանալ քարտը Բանկի տարածքում:

2.17. Թվային քարտի CVV/CVC կոդը Բանկը Քարտապանին տրամադրում է վերջինիս՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին sms հաղորդագրության միջոցով՝ թվային քարտի ակտիվացման համար սույն Պայմաններով սահմանված ժամկետում: Թվային քարտի CVV/CVC կոդը չստանալու դեպքում Քարտապանը պետք է տեղեկացնի Բանկին, և այդ պարագայում քարտը ենթակա է վերաթողարկման: Թվային քարտի CVV/CVC կոդը վերականգնման ենթակա չէ, այն Բանկում չի պահպանվում, այն կորցնելու կամ մոռանալու դեպքում քարտը ենթակա է վերաթողարկման:

2.18. Բանկի կողմից տրամադրվող PIN կոդով քարտերի դեպքում քարտը և PIN կոդը քարտի առաքման հասցեով առաքման եղանակով ստանալուց հետո քարտն ակտիվացնելու համար Քարտապանը պետք է զանգահարի Բանկ:

2.19. Բանկն իրավունք ունի փակել քարտը, եթե այն չի ակտիվացվել առաքումից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում:

2.20. Բանկի կողմից տրամադրվող PIN կոդով քարտն ակտիվացվում է հետևյալ ժամկետներում և կարգով՝
   2.20.1. Բանկի տարածքում քարտի տրամադրման դեպքում՝ քարտը և PIN կոդը Քարտապանի կողմից ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում,
   2.20.2. քարտի առաքման հասցեով առաքման եղանակով քարտի տրամադրման դեպքում՝ քարտը ակտիվացնելու համար Քարտապանի և Բանկի միջև կապ հաստատվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի կողմից Քարտապանին պատշաճ նույնականացման պարագայում:
2.21. Քարտապանի կողմից ձևավորվող PIN կոդով քարտը ակտիվացվում է Քարտապանի կողմից PIN կոդը բանկոմատի միջոցով սահմանելու գործընթացի բարեհաջող ավարտի պահին:
2.22. Թվային քարտն ակտիվացվում է քարտի պատվիրման հայտը Քարտապանի կողմից Բանկ ներկայացվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ CVV/CVC կոդը Բանկի կողմից Քարտապանին ուղարկվելու պահից:
2.23. Քարտի գործողության ժամկետը սահմանվում է Բանկի սակագներով:

3. Քարտի օգտագործման և անվտանգության կանոններ

3.1. Քարտապանը պետք է ստորագրի քարտի հակառակ կողմի վրա՝ ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտում: Քարտի հակառակ կողմում ստորագրության բացակայությունը կամ դրա անհամապատասխանությունը օրինական հիմք է քարտի սպասարկումը մերժելու և քարտն առգրավելու համար: Սույն կետը չի վերաբերում թվային քարտերին:
3.2. Քարտապանի կողմից քարտի PIN կոդը սահմանելիս խորհուրդ է տրվում ընտրել հնարավորինս բարդ ծածկագիր, այդ թվում՝ չօգտագործել իրար հաջորդող կամ կրկնվող թվեր:
3.3. Քարտը կարող է օգտագործվել Բանկի պայմաններով և Բանկի սակագներով տվյալ քարտատեսակի համար սահմանված գործարքների համար բանկոմատներում, կանխիկացման և առևտրի/սպասարկման կետերում և այն սարքավորումների միջոցով, որոնց էկրանին կամ հարակից տարածքի մակերեսին առկա է քարտերի սպասարկման վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝
   3.3.1. քարտով հնարավոր գործարքների վերաբերյալ, օրինակ՝ կանխիկի տրամադրում, կանխիկի մուտքագրում, կոմունալ վճարումներ և այլն,
   3.3.2. քարտի վրա առկա նշումներին համապատասխան տվյալ քարտը սպասարկող վճարային համակարգերով (ArCa, VISA, MasteCard և այլն) սպասարկելու հնարավորության վերաբերյալ,
   3.3.3. անհպում և թոքենացված քարտերի օգտագործման համար՝ անհպում տեխնոլոգիայով վճարման եղանակը և անհպում քարտային պիտակները կիրառելու վերաբերյալ:
3.4. Քարտի, OTP-ի, PIN կոդի, CVV/CVC կոդի, քարտի գաղտնաբառի և քարտի ցանկացած այլ տեղեկատվության օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Քարտապանը:
3.5. Քարտապանն իրավունք չունի փոխանցել քարտը, հայտնել OTP-ն, PIN կոդը, քարտի գաղտնաբառը, CVV/CVC կոդը այլ անձանց: Քարտապանը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի քարտը, OTP-ն, PIN կոդը, քարտի գաղտնաբառը, CVV/CVC կոդը, քարտի վրա նշված տեղեկատվությունը տեսանելի կամ այլ կերպ հասանելի չլինեն այլ անձանց:
3.6. Արգելվում է գրել PIN կոդը կամ OTP-ն քարտի վրա, ինչպես նաև քարտը և PIN կոդը պահել միասին:
3.7. Քարտով գործարքների իրականացման ժամանակ Քարտապանը պետք է մուտքագրի PIN կոդը, եթե գործարքի կատարման համար օգտագործվող սարքավորման միջոցով տվյալ տեսակի քարտով գործարքի իրականացման համար պահանջվում է PIN կոդի մուտքագրում: Ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) քարտով գործարքների իրականացման ժամանակ PIN կոդի մուտքագրում չի պահանջվում: Անհպում քարտով և Ստիկերով ՀՀ տարածքում մինչև 20,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով օրական առավելագույնը 5 (հինգ) գործարք կատարելու դեպքում PIN կոդի մուտքագրում չի պահանջվում: ՀՀ տարածքից դուրս անհպում գործարքների դեպքում PIN կոդի մուտքագրման պահանջը կարգավորվում է համապատասխան վճարային համակարգի՝ տվյալ երկրի համար գործող պայմաններով և կանոններով:

3.8. Արգելվում է ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) մուտքագրել (հայտնել) PIN կոդը: PIN կոդը հայտնելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:

3.9. Քարտը օգտագործելիս PIN կոդը անհրաժեշտ է հավաքել այնպես, որ տեսանելի չլինի այլ անձանց համար և չտեսագրվի որևէ տեսաձայնագրող սարքի միջոցով:

3.10. Քարտապանը պետք է առավել ուշադիր լինի այն գործարքների մասով, որոնք իրականացվում են ժամանցի և նմանատիպ այլ վայրերում: Խորհուրդ է տրվում քարտը չվստահել այլ անձանց և թույլ չտալ քարտի օգտագործումը Քարտապանի տեսադաշտից դուրս:

3.11. Չի կարելի օգտվել այն բանկոմատներից, կանխիկացման և առևտրի/սպասարման կետերից և սարքավորումներից, որոնք հաճախորդի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև եթե դրանց քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կպչուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:

3.12. Ինտերնետ միջավայրում քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում նախատեսող կայքերին (secure-payment website): Առցանց խաղատները, բուքմեյքերական գրասենյակները համարվում են առավել ռիսկային:

3.13. Գործարք կատարելիս PIN կոդը հաջորդաբար 3 (երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում քարտը կարող է բլոկավորվել և/կամ առգրավվել: Քարտը կարող է առգրավվել նաև բանկոմատից դուրս գալուց հետո 20 (քսան) վայրկյանի ընթացքում քարտը չվերցնելու դեպքում, ինչպես նաև բանկոմատի տեխնիկական խնդիրների և քարտը վնասված լինելու պատճառով:

3.14. Եթե բանկոմատի միջոցով քարտով գործարք կատարելիս քարտը բանկոմատում առգրավվել է, և քարտի առգրավման պատճառի մասին որևէ հաղորդագրություն չի արտացոլվում էկրանին կամ անդորրագրի վրա, Քարտապանը պետք է անմիջապես զանգահարի Բանկ և համոզվի, որ քարտը բլոկավորվել է: Եթե քարտը չի բլոկավորվել, անհրաժեշտ է անհապաղ բլոկավորել այն:

3.15. Բանկոմատում առգրավված քարտը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Բանկ: Առգրավված քարտը վերադարձվում է Քարտապանին քարտի առգրավման օրվանից հաշված հետևյալ ժամկետներում՝

3.15.1. Եթե բանկոմատը գտնվում է Բանկի երևանյան որևէ մասնաճյուղի տարածքում՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում,

3.15.2. Եթե բանկոմատը գտնվում է այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկն ունի մասնաճյուղ՝ 4 (չորս) աշխատանքային օրվա ընթացքում,

3.15.3. Եթե բանկոմատը գտնվում է ՀՀ այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկը չունի մասնաճյուղ՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում,

3.15.4. Եթե քարտը առգրավվել է ՀՀ այլ բանկերի բանկոմատներում, քարտը տրամադրվում է Քարտապանին Բանկի կողմից այն ստանալու պահից 4 (չորս) աշխատանքային օրվա ընթացքում:

Քարտի առգրավման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում քարտը Քարտապանի կողմից չստանալու դեպքում Բանկն իրավասու է փակել և ոչնչացնել քարտը:

3.16. Բանկը պատասխանատվություն չի կրում բանկոմատի, կանխիկացման, առևտրի/սպասարկման կետի կամ սարքավորման կողմից քարտի սպասարկումը մերժելու կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պատասխանատվությունն ուղղակի սահմանված է օրենքով, և երբ մասնավորապես միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

3.16.1. առկա է Բանկի մեղքը,

3.16.2. խափանումը/չսպասարկումը տեղի է ունեցել Բանկի աշխատանքային ժամերին,

3.16.3. հաճախորդն այցելել է Բանկի գլխամասային գրասենյակ և/կամ որևէ մասնաճյուղ, սակայն վերջիններս չեն տրամադրել քարտում առկա գումարը կամ պահանջվող մասը կանխիկ եղանակով:

Ընդ որում, Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Քարտապանին պատճառված իրական (ուղղակի) վնասի չափով:

3.17. Քարտի ապօրինի օգտագործման կամ ապօրինի օգտագործման վտանգի մասին տեղեկություններ, կասկած ունենալու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:

3.18. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանի ցանկությամբ՝ Բանկը Քարտապանին՝ վերջինիս՝ Բանկում գրանցված հեռախոսահամարին, ուղարկում է քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրություն՝ Բանկում գործող սակագների համաձայն: 10,000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) և ավելի գումարով գործարքների համար SMS հաղորդագրության ծառայությունը քարտի տրամադրման պահից լռելյայն ակտիվացվում և տրամադրվում է Բանկի կողմից, քանի դեռ Քարտապանը Բանկ ներկայացվող համապատասխան հանձնարարականով չի հրաժարվել այդ ծառայությունից: Հավելյալ քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրություն կարող է ուղարկվել Հավելյալ քարտապանին՝ Հիմնական քարտապանի համաձայնության առկայության պարագայում: Քարտով իրականացված գործարքների մասին SMS հաղորդագրության ծառայությունից օգտվելը զգալիորեն բարձրացնում է Քարտի ապօրինի օգտագործման կանխարգելման հնարավորությունները, քանի որ նման գործարքների մասին հաղորդագրություն ստանալով՝ Քարտապանը կարող է անհապաղ տեղեկացնել Բանկին և կանխել քարտի հետագա ապօրինի օգտագործումը: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտի օգտագործումից բխող Քարտապանի հնարավոր կորուստների և վնասների համար, եթե Քարտապանը չի ստացել քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրությունը բջջային կապի անհասանելիության, հեռահաղորդակցության ցանցի դանդաղության, բջջային կապի ծածկույթի սահմանափակման, կապի խափանումների և ընդհատումների դեպքում, ինչպես նաև ըստ գործարքների տեսակների՝ վճարային համակարգերի կարգաբերումների արդյունքում:

3.19. Քարտապանը պարտավոր է SMS հաղորդագրության ծառայության, ինչպես նաև բջջային հեռախոսահամարի օգտագործմամբ Բանկի կողմից հասանելի դարձվող այլ ծառայությունների (այդ թվում՝ USSD ծառայության) համար Քարտապանի՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին: Քարտապանի կողմից բջջային հեռախոսահամարի փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով երրորդ անձանց տեղեկատվության հասանելի դառնալը չի համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում: Քարտապանի հեռախոսը երրորդ անձանց հասանելի դառնալու պարագայում դրանում պահվող տվյալները կամ հեռախոսի միջոցով ձեռքբերվող տեղեկատվությունը բացահայտվելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

3.20. Քարտապանը կարող է ինքնուրույն իրականացնել (ինքնասպասարկման սարքերի կամ այլ հեռահար սպասարկման ուղիների (SMS, USSD, ինտերնետ/մոբայլ բանկ) միջոցով) քարտի հետ կապված հասանելի կարգաբերումներ, որոնք Բանկի և քարտը սպասարկող վճարային կազմակերպության համար հանդիսանում են Քարտապանի կողմից գրավոր տրված հանձնարարական:

3.21. Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալիս Քարտապանը պետք է ստուգի գործարքի գումարը և կարգավիճակը (կատարված, մերժված և այլն): Գործարքի հետ համաձայն չլինելու դեպքում Քարտապանը պարտավոր է անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին՝ անհրաժեշտության դեպքում բլոկավորելով քարտը:

3.22. Ինտերնետ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով «3D secure» հնարավորություն կիրառող կայքերում գործարքներ կատարելու համար կայքի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում Քարտապանը պետք է մուտքագրի Բանկի կողմից տրամադրվող մեկանգամյա գաղտնաբառը, որը Քարտապանը յուրաքանչյուր անգամ գործարք կատարելիս ստանում է ըստ կիրառելիության իր՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին, էլեկտրոնային հասցեին կամ այլ միջոցներով՝ ներառյալ թոքեն, բջջային հավելված և այլն: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ

պատճառով գաղտնաբառը չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

3.23. Քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկն իրավասու է միակողմանիորեն փոփոխել քարտով գործարքների կատարման և (կամ) հավաստման կարգը՝ գործարքի կատարման համար որպես պահանջ սահմանելով նույնականացնող ծածկագրերի (մեկանգամյա գաղտնաբառ և այլն) կիրառումը, որոնք կարող են Բանկի կողմից ուղարկվել ըստ կիրառելիության Քարտապանի՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին, էլեկտրոնային հասցեին և այլ միջոցներով՝ ներառյալ թոքեն, բջջային հավելված և այլն:

3.24. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանը իր ցանկությամբ քարտի գործողության ընթացքում ցանկացած պահի կարող է սահմանել և փոխել քարտով գործարքների սահմանափակումներ՝ ըստ գործարքի տեսակի և (կամ) ըստ գործարքի կատարման աշխարհագրության: Սահմանափակումը կիրառվում է միայն հավաստագրվող գործարքների համար: Քարտի վերաթողարկման դեպքում նախկինում սահմանված սահմանափակումները չեն փոխանցվում վերաթողարկված քարտին և ենթակա են կրկին սահմանման վերաթողարկված քարտի համար Քարտապանի կողմից՝ Բանկ ներկայացնելով սահմանված ձևանմուշով համապատասխան հանձնարարական:

3.25. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում քարտի կիրառմամբ գործարքների կատարումը:

3.26. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել քարտի միջոցով տրամադրվող ծառայությունները, եթե հիմնավոր կասկածներ ունի քարտով կատարված գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ: Ծառայությունների կասեցումը Բանկի կողմից վերացվում է գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը կամ բավարար պարզաբանումներ ստանալուց հետո:

3.27. Քարտի փակման դեպքում (վաղաժամկետ կամ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո) Քարտապանը պետք է քարտը վերադարձնի Բանկ: Եթե ինչ-որ պատճառով Քարտապանը չի կարող վերադարձնել քարտը, և այն գտնվում է իր մոտ, ապա Քարտապանը պետք է ոչնչացնի քարտը՝ կտրելով մասերի մագնիսական երիզի և չիպի երկայնքով: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտը չվերադարձնելու հետևանքով քարտով իրականացված գործարքների համար:

4. Քարտի կորուստ, գողություն, զեղծարարություն

4.1. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին կամ ArCa պրոցեսինգային կենտրոնին՝ կապ հաստատելով հետևյալ ցանկացած եղանակով՝

4.1.1. քարտի վրա նշված հեռախոսահամարով,

4.1.2. Բանկի շուրջօրյա (+374 10) 56 11 11 և (+374 12) 56 11 11 հեռախոսահամարներով,

4.1.3. ArCa պրոցեսինգային կենտրոնի (+374 10) 59 22 22 հեռախոսահամարով,

4.1.4. Բանկի cardsupport@ameriabank.am էլեկտրոնային փոստի հասցեով,

4.1.5. այցելություն Բանկի ցանկացած մասնաճյուղ՝ Բանկի գործառնական ժամերին,

4.1.6. Քարտապանի՝ Բանկում գրանցված հեռախոսահամարից հավաքելով *116# կոդը:

4.2. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին ստացված տեղեկատվության հիման վրա Բանկը բլոկավորում է քարտը նման տեղեկատվություն ստանալու պահից առավելագույնը 15 րոպեի ընթացքում:

4.3. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո Քարտապանը պարտավոր է ողջամիտ ժամկետում այդ մասին նաև գրավոր տեղեկացնել Բանկին: Պատշաճ տեղեկացման պահ է համարվում գրավոր տեղեկացումը:

4.4. Մինչև քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը և Բանկի կողմից քարտը 4.2 կետում սահմանված ժամկետում բլոկավորելը քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

4.5. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո քարտով իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում՝ համաձայն Բանկի սակագների:

4.6. Քարտապանը պարտավոր է հատուցել քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին չտեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելը երրորդ անձանց կողմից քարտի օգտագործման հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները:

4.7. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի քարտի ապաբլոկավորման դիմում: Այս դեպքում քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

5. Քարտի թոքենացում և մոբայլ (NFC) վճարումներ

5.1. Մոբայլ (NFC) վճարումները Բանկի MyAmeria համակարգի բջջային հավելվածի (այսուհետ սույն գլխում՝ Հավելված) կամ մոբայլ սարքի վրա տեղադրված այլ ընկերության կողմից տրամադրվող համակարգի (այսուհետ սույն գլխում՝ Համակարգ) միջոցով անհպում վճարումներ են, որոնց իրականացման համար անհրաժեշտ է Հավելվածում կամ Համակարգում կցել քարտը՝ ստեղծելով քարտի թոքենացված համարժեքը (այսուհետ՝ թոքենացված քարտ):

5.2. Մեկ մոբայլ սարքի վրա տեղադրված Հավելվածում կամ Համակարգում կարող է թոքենացվել ինչպես մեկ քարտ, այնպես էլ միաժամանակ՝ մեկից ավել քարտեր:

5.3. Հաճախորդը միևնույն քարտը կարող է թոքենացնել տարբեր մոբայլ սարքերի վրա տեղադրված Հավելվածներում կամ Համակարգերում:

5.4. Հավելվածը և Համակարգը գործում է, իսկ Հավելվածում քարտի թոքենացումը հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե մոբայլ սարքն ունի ապաբլոկավորման ակտիվացված պաշտպանիչ որևէ հնարավորություն (մատնահետք, դեմքով նույնականացում կամ այլ):

5.5. Հավելվածը գործում է IOS և Android օգտատերերի՝ համապատասխանաբար IOS13 և բարձր և Android 6 և բարձր օպերացիոն համակարգերով մոբայլ սարքերի համար, որոնք ունեն NFC տեխնոլոգիայի կիրառման հնարավորություն: Համակարգը գործում է վերջինիս մատակարար հանդիսացող ընկերության կողմից սահմանված պահանջներին բավարարող և NFC տեխնոլոգիայի կիրառման հնարավորություն ունեցող մոբայլ սարքերի համար:

5.6. Քարտի թոքենացման գործընթացում հաճախորդի քարտի տվյալների անվտանգությունը երաշխավորված է, կախված քարտի տեսակից, համապատասխան վճարային համակարգի կողմից:

5.7. Թոքենացնել կարելի է Բանկի կողմից թողարկված Visa և Master Card (վերջինս հասանելի չէ Android օպերացիոն համակարգով աշխատող մոբայլ սարքերի վրա Հավելվածի միջոցով թոքենացման համար) քարտերը՝ բացառությամբ Gift, Business և Cirrus Maestro տեսակի քարտերի:

5.8. Մոբայլ (NFC) վճարումները կարող են իրականացվել աշխարհի բոլոր առևտրի կետերում, որտեղ սպասարկվում են համապատասխան վճարային համակարգի քարտեր և որտեղ տեղադրված են անհպում սպասարկող POS տերմինալներ:

5.9. Մոբայլ (NFC) վճարում կատարելու համար.

5.9.1. IOS օպերացիոն համակարգով աշխատող մոբայլ սարքերի դեպքում պետք է ապաբլոկավորել մոբայլ սարքը և Համակարգը/Հավելվածը՝ օգտագործելով դրանց ապաբլոկավորման պաշտպանիչ մեթոդը (մատնահետք, դեմքով նույնականացում կամ այլ) և մոբայլ սարքը մոտեցնել POS տերմինալին:

5.9.2. Android օպերացիոն համակարգով աշխատող մոբայլ սարքերի դեպքում պետք է ապաբլոկավորել մոբայլ սարքը՝ օգտագործելով դրա ապաբլոկավորման պաշտպանիչ մեթոդը (մատնահետք, դեմքով նույնականացում կամ այլ), բացել (ակտիվացնել) Համակարգը/Հավելվածը և մոբայլ սարքը մոտեցնել POS տերմինալին: Սակայն ՀՀ տարածքում մինչև 20,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով օրական առավելագույնը 5 (հինգ) գործարք կատարելու դեպքում, եթե Համակարգը /Հավելվածը մոբայլ սարքում ակտիվ է, բավական է ակտիվացնել մոբայլ սարքի էկրանը (առանց ապաբլոկավորելու մոբայլ սարքը) և մոբայլ սարքը մոտեցնել POS տերմինալին: ՀՀ տարածքից դուրս նշված սահմանաչափերը կարգավորվում են համապատասխան վճարային համակարգի կողմից տվյալ երկրի համար սահմանված պայմաններով և կանոններով: Ընդ որում, որպեսզի առանց մոբայլ սարքն ապաբլոկավորելու՝ թոքենացված քարտով գործարքներ կատարելու հնարավորությունը համարվի ոչ ակտիվ, պետք է յուրաքանչյուր անգամ Հավելվածից օգտվելուց հետո փակել Հավելվածը (դուրս գալ Հավելվածից), իսկ Համակարգի պարագայում՝ ապակցել քարտը:

5.10. Թոքենացված քարտերով գործարքների դեպքում PIN կոդի մուտքագրման պահանջը կախված է վճարումը ընդունող POS տերմինալից և կարգավորվում է համապատասխան վճարային համակարգի կողմից տվյալ երկրի համար սահմանված պայմաններով և կանոններով: Միևնույն ժամանակ, եթե թոքենացվել է Բանկի թվային քարտ, ապա այդ քարտի համար հասանելի չեն այն սարքավորումներն ու գործարքները, որոնց համար պահանջվում է PIN կոդի մուտքագրում:

5.11. Թոքենացված քարտերով կանխիկի ելքագրման գործարքները հասանելի չեն:

5.12. Թոքենացված քարտի և ըստ պահանջի նույնականացման (առուտենտիֆիկացիոն) տվյալների կիրառմամբ մոբայլ (NFC) վճարումները և այլ գործարքները հավասարազոր են ֆիզիկապես քարտով կատարված գործարքներին, և Քարտապանը իր կողմից թոքենացված քարտով կատարված վճարումների համար կրում է սույն Պայմաններով սահմանված նույն պատասխանատվությունը, ինչը գործում է ֆիզիկապես քարտով կատարված գործարքների համար:

5.13. Մինչև քարտի թոքենացումը Հավելվածում կամ Համակարգում Քարտապանը պարտավոր է համոզվել, որ մոբայլ սարքում կամ Հավելվածում գրանցված են միայն Քարտապանի կենսաչափական նույնականացման տվյալները (մատնահետք, դեմքով նույնականացում կամ այլ), քանի որ միայն վերջիններս են հաշվի առնվելու թոքենացված քարտով կատարվող գործարքների հաստատման համար: Եթե Հավելվածում նույնականացման համար կամ մոբայլ սարք մուտք գործելու կամ Հավելվածում կամ Համակարգում գործարքներ իրականացնելու համար կիրառվում են այլ անձի կենսաչափական տվյալներ (մատնահետք, դեմքով նույնականացում կամ այլ), ապա վերջիններս համարվելու են Քարտապանի նույնականացման կենսաչափական տվյալներ, իսկ կատարված գործարքների համար ողջ պատասխանատվությունը կրելու է Քարտապանը: Քարտապանը պարտավոր է ապահովել իր նույնականացման (առուտենտիֆիկացման) տվյալների պահպանումը երրորդ անձանց համար անհասանելի վայրում:

5.14. Հավելվածը գործում է նաև առանց ինտերնետի հասանելիության՝ պայմանով, որ կատարված է թոքենացված քարտի բանալիների փոխանակում: Ինտերնետի հասանելիության առկայության յուրաքանչյուր 27-րդ (քսանյոթերորդ) օրը ինքնաշխատ կերպով կատարվում է թոքենացված քարտի բանալիների փոխանակում (թոքենների համարների վերալիցքավորում): Ուստի թոքենացված քարտով վճարումներ իրականացնելու համար անհրաժեշտ է առնվազն 27 (քսանյոթ) օրը մեկ ունենալ ինտերնետին հասանելիություն:

5.15. Թոքենացված քարտով կատարված գործարքների բողոքարկման կարգը նույնն է, ինչ սույն պայմաններով սահմանված՝ ֆիզիկապես քարտով կատարված գործարքների դեպքում:

5.16. Մոբայլ սարքը կորցնելու, նույնականացման (առուտենտիֆիկացման) կամ թոքենացված քարտի տվյալները գողանալու կամ այլ անձանց հասանելի դառնալու դեպքում թոքենացված քարտի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ: Ընդ որում, նշված պահանջը չկատարելու դեպքում թոքենացված քարտերով կատարված գործարքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

5.17. Եթե քարտը բլոկավորված է, ապա այն հնարավոր չէ թոքենացնել:

5.18. Ֆիզիկական քարտը բլոկավորելու դեպքում այդ քարտի թոքենացված քարտով գործարք հնարավոր չէ իրականացնել:

5.19. Քարտապանի կողմից թոքենացված քարտի բլոկավորման դեպքում ֆիզիկական քարտը չի բլոկավորվում:

5.20. Սույն պայմանների թոքենացված քարտին վերաբերող դրույթները կիրառվում են միայն Քարտապանի կողմից քարտի թոքենացման և թոքենացված քարտի կիրառման առումով: Մոբայլ սարքի և Համակարգի մատակարարը, բջջային օպերատորը և Համակարգին միացված այլ կայքերը և ծառայություն մատուցող երրորդ անձինք ունեն իրենց սեփական պայմանագրերը և պայմանները, որոնց Քարտապանը պետք է հետևի և միայն այդ պայմանների և պայմանագրերով սահմանված կարգավորումների ընդունելի լինելու պարագայում այդ անձանց տրամադրի անձնական տվյալներ, օգտվի դրանց ծառայություններից կամ այցելի համապատասխան կայքեր:

5.20.1. Բանկը պատասխանատվություն չի կրում մոբայլ սարքի և Համակարգի մատակարարի կամ երրորդ կողմի ծառայությունների անվտանգության, ճշտության, օրինականության, կիրառելիության և դրանց աշխատանքի անխափանության և կիրառության որևէ այլ հարցի հետ կապված:

5.20.2. Քարտապանը պարտավոր է մինչև Համակարգում քարտի թոքենացումը ծանոթանալ ներգրավված երրորդ անձանց հետ պայմանագրերի պայմաններին:

5.20.3. Բանկը պատասխանատվություն չի կրում և չի տրամադրում օժանդակություն երրորդ կողմի ցանկացած ապարատային և ծրագրային (ներառյալ մոբայլ սարքի և դրա վրա տեղադրված համակարգի), ինչպես նաև այլ պրոդուկտների և ծառայությունների հետ կապված: Երրորդ կողմի պրոդուկտների և ծառայությունների, վերջիններիս տրամադրված անձնական տվյալների հետ կապված խնդիրներ կամ հարցեր առաջանալու դեպքում Քարտապանը պարտավոր է դիմել անմիջապես երրորդ կողմին՝ անհրաժեշտ օժանդակություն կամ օգնություն ստանալու նպատակով: Համակարգի օգտագործման հետ կապված հարցեր առաջանալու դեպքում (բացառությամբ թոքենացված քարտի հետ կապված խնդիրների) Քարտապանը պարտավոր է դիմել անմիջապես այդ Համակարգի սպասարկման ծառայություն:

5.21. Թոքենացված քարտին հասանելիությունը, դրա կիրառումը և սպասարկումը կախված են Համակարգի կամ բջջային ծառայության օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների ծավալից: Բանկը չի հանդիսանում Համակարգի ծառայությունների կամ ցանցի օպերատոր և չի վերահսկում վերջիններիս գործողությունները: Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի առջև ցանկացած հանգամանքի համար, որը կարող է ընդհատել, խոչընդոտել կամ այլ կերպ անդրադառնալ թոքենացված քարտի օգտագործման վրա, խաթարել նշված քարտով գործարքների կատարման ընթացքը, այդ թվում՝ Համակարգի կամ բջջային կապի անհասանելիության, հեռահաղորդակցության, ցանցի դանդաղության, բջջային կապի ծածկույթի սահմանափակման, կապի խափանումների և ընդհատումների դեպքում:

5.22. Թոքենացված քարտի օգտագործումը ենթադրում է անձնական տվյալների էլեկտրոնային փոխանցում երրորդ կողմի կապի միջոցով: Քանի որ Բանկը չի հանդիսանում նման կապի շահագործող կամ վերահսկող, Բանկը չի կարող երաշխավորել տվյալների այդպիսի փոխանցման գաղտնիությունը կամ անվտանգությունը: Բացի այդ, Քարտապանի մոբայլ սարքը նախապես կարգաբերված է բջջային կապի օպերատորի կողմից:

5.23. Մոբայլ սարքի միջոցով Բանկին ուղարկվող կամ Բանկից ստացվող անձնական կամ գաղտնիք կազմող տեղեկատվության առումով՝ Բանկն իրավունք ունի սահմանափակել նման միացումները՝ ելնելով անվտանգության մակարդակից, որը սահմանվում է Բանկի հայեցողությամբ՝ ըստ անվտանգության չափանիշների: Ընդ որում, Բանկը չի կարող որևէ պատասխանատվություն կրել սույն կետով իրեն վերապահված իրավունքը չիրացնելու համար:

5.24. Սույն պայմանների ակցեպտավորմամբ Քարտապանը իր համաձայնությունն է տալիս ստանալ Բանկից կամ Համակարգի մատակարարից Հավելվածի կամ Համակարգի ծառայությունների կարգավիճակի մասին ծանուցումներ հետևյալ կապի միջոցներով՝ էլեկտրոնային հասցե, կարճ հաղորդագրություն (SMS), Push ծանուցումներ, Հավելվածի կամ Համակարգի ծանուցման հնարավորություններ:

6. Գործարքներ

6.1. Քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործարքները, եթե առանձին տեսակի քարտերի համար Բանկի կողմից սահմանված պայմաններով, սակագներով և (կամ) պայմանագրերով սահմանափակումներ նախատեսված չեն՝

6.1.1. կանխիկի մուտքագրում՝ քարտով/քարտին կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող սարքավորման միջոցով, ինչպես նաև Բանկի դրամարկղում,

6.1.2. կանխիկի ելքագրում՝ քարտով/քարտից կանխիկի ելքի հնարավորություն ունեցող բանկոմատի կամ սարքավորման, POS տերմինալի միջոցով, ինչպես նաև Բանկի դրամարկղում,

6.1.3. փոխանցում՝ բանկոմատի միջոցով, բանկերում, ինչպես նաև բանկերի կայքերի և հեռակառավարվող համակարգերի և ArCa առցանց վճարային համակարգի միջոցով,

6.1.4. անկանխիկ եղանակով վճարում ապրանքների և ծառայությունների դիմաց՝ առևտրի/սպասարկման կետերում, ներառյալ՝ ինտերնետ միջավայրում:

6.2. Բանկի դրամարկղում քարտին կանխիկ մուտքագրված գումարը, ինչպես նաև Բանկի հաշվից քարտին փոխանցումը քարտի վրա հասանելի է դառնում որպես կանոն մինչև 10 (տասը) րոպեի ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում), իսկ քարտային հաշվում հաշվառվում է որպես կանոն նույնպես մինչև 10 (տասը) րոպեի ընթացքում:

6.3. Բանկի և Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների վճարային տերմինալներով քարտին կանխիկ մուտքագրված գումարը քարտին հասանելի է դառնում որպես կանոն մինչև 5 (հինգ) րոպեի ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):

6.4. ՀՀ տարածքում գործող բանկերի և կազմակերպությունների բանկոմատների միջոցով քարտին կանխիկ մուտքագրված գումարը քարտին հասանելի է դառնում որպես կանոն մինչև 5 (հինգ) րոպեի ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում), իսկ քարտային հաշվում հաշվառվում է որպես կանոն հաջորդ աշխատանքային օրը:

6.5. Քարտին փոխանցումը (բանկոմատի, բանկերի, այլ կազմակերպությունների առցանց հարթակների, բանկերի հեռակառավարվող համակարգերի միջոցով) քարտին հասանելի է դառնում որպես կանոն մինչև 5 (հինգ) րոպեի ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում), իսկ քարտային հաշվում հաշվառվում է որպես կանոն հաջորդ աշխատանքային օրը:

6.6. Քարտապանի կողմից Բանկ ներկայացված վճարման հանձնարարականով փոխանցումը Բանկի կողմից կատարվում է Բանկի սակագներով սահմանված ժամկետներում:

6.7. Այլ բանկերից փոխանցումները քարտային հաշվին հասանելի են դառնում որպես կանոն մինչև 3 (երեք) աշխատանքային ժամվա ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում:

6.8. Կանխիկի մուտքագրման սարքավորման հնարավորություններն ու սահմանափակումները՝ կապված մուտքագրվող գումարի արժույթի, թղթադրամի արժողության/տեսակի հետ և այլն, սահմանվում են տվյալ սարքավորման սպասարկող կազմակերպության և (կամ) վճարային համակարգի կողմից, և նման տեղեկատվությունը որպես կանոն ներկայացված է այդ սարքավորման վրա:

6.9. Գործարքի գումարը քարտից ելքագրվում է անմիջապես, իսկ քարտային հաշվում հաշվառվում է որպես կանոն հետևյալ ժամկետներում՝

6.9.1. ArCa համակարգում կատարված գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը,

6.9.2. ArCa համակարգից դուրս կատարված գործարքների դեպքում 2-3 աշխատանքային օր հետո:

6.10. Քարտի վերաթողարկման ընթացքում քարտային հաշվով կամ դեռևս գործող քարտով գործարքները հնարավոր է հասանելի չլինեն՝ ArCa պրոցեսինգային կենտրոնում քարտերի վերաբերյալ տեղեկատվության գրանցման ժամանակային տարբերությամբ պայմանավորված:

6.11. Քարտի գործողության ժամկետի ընթացքում Քարտապանի հայտի համաձայն քարտի վերաթողարկման դեպքում գործող քարտը բլոկավորվում է Բանկի կողմից, բացառությամբ՝ եթե այլ բան է համաձայնեցվել Բանկի և Քարտապանի միջև:

6.12. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի քարտին/քարտային հաշվին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու կամ քարտային հաշվին ուշացումով հաշվառվելու համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ պայմանավորված տեխնիկական խնդիրների կամ խափանումների և/կամ երրորդ անձանց, այդ թվում՝ վճարային համակարգերի կողմից կատարման ենթակա գործողությունների հետաձգման, ուշացման կամ չկատարման հանգամանքներով: Նման հանգամանքներից ելնելով՝ այդ թվում՝ հնարավոր է, որ յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը գործարքների գումարները քարտին հասանելի դառնան սահմանված ժամկետներից ավելի ուշ:

6.13. Քարտով կանխիկի ստացման օրական գործարքների առավելագույն գումարը և քանակը սահմանվում են Բանկի սակագներով: Սահմանված սահմանաչափը գերազանցող չափով գումարի կանխիկացման համար անհրաժեշտ է Բանկ ներկայացնել համապատասխան դիմում, որի ուսումնասիրության արդյունքում Բանկը կայացնում է որոշում կանխիկացման սահմանաչափի ավելացման կամ դիմումը մերժելու վերաբերյալ:

6.14. ՀՀ բանկերի բանկոմատների միջոցով կանխիկի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

6.15. Բանկն իրավունք ունի հետևյալ դեպքերում իր հայեցողությամբ կասեցնել քարտով գործարքների իրականացումը (քարտի բլոկավորում), ինչպես նաև մինչև 120 օր ժամկետով կասեցնել քարտային հաշվի և/կամ դրան մուտքագրված գումարի՝ հաճախորդի կողմից տնօրինման հնարավորությունը, ինչպես նաև մերժել փոխանցված գումարի մուտքագրումը քարտային հաշվին և/կամ առանց հաճախորդի լրացուցիչ հանձնարարության՝ հետ փոխանցել այդ գումարը փոխանցող կողմին (այդ թվում ելքագրելով այն Հաճախորդի քարտային հաշվից)՝ գանձելով Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարը.

6.15.1. Քարտին կամ քարտային հաշվին փոխանցված կամ մուտքագրված գումարի հետ կապված Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ՝ զեղծարար գործարք կամ գործարքների շղթայի մաս լինելու վերաբերյալ, այդ թվում միջազգային վճարային համակարգերից ստացված զեղծարարության հաշվետվություններում խնդրահարույց գործարքը նույնականացնող տվյալների առկայության դեպքում,

6.15.2. Բանկը գումարը փոխանցող բանկից ստանում է տեղեկատվություն և գրավոր պահանջ՝ փոխանցման գործարքը որպես զեղծարար որակելու և Հաճախորդին փոխանցված գումարը հետ վերադարձնելու մասին,

6.15.3. Փոխանցումը կապված է կրիպտոարժույթով գործարքի հետ, և/կամ գործարքի կողմ է կրիպտոարժույթի հետ կապված գործունեություն իրականացնող անձ:

6.15.4. Քարտապանն ունի Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ,

6.15.5. Պայմաններով, Բանկի հիմնական պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6.16. Բլոկավորված քարտը Բանկի կողմից ապաբլոկավորվում է Քարտապանի գրավոր հանձնարարականի հիման վրա այն ստանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններում և Բանկի հիմնական պայմաններում: Բանկի նախաձեռնությամբ բլոկավորված քարտը կամ սառեցված քարտային հաշիվը Բանկի կողմից ապաբլոկավորվում է / քարտային հաշիվը ապասառեցվում է, երբ վերանում է համապատասխանաբար քարտի բլոկավորման / հաշվի սառեցման հիմքը (այդ թվում Քարտապանից ստացված տեղեկատվության հիման վրա) այն վերանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններում և Բանկի հիմնական պայմաններում:

6.17. Քարտի բլոկավորման դեպքում չի դադարում քարտի հետ կապված միջնորդավճարների հաշվարկը և գանձումը:

6.18. ArCa առցանց վճարային համակարգի անհասանելիության ընթացքում Քարտապանի կողմից Բանկ ներկայացված քարտի բլոկավորման հանձնարարականը Բանկի կողմից կատարվում է ArCa առցանց վճարային համակարգի հասանելիության վերականգնումից հետո 15 րոպեի ընթացքում: Այս ընթացքում քարտով կատարված գործարքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

6.19. Ցանկացած գործարք, որը ճանաչվում է Քարտապանի քարտի միջոցով կատարված գործարք, հանդիսանում է Քարտապանի պարտավորությունը:

6.20. Քարտով կատարված գործարքը և այն չեղարկելու արդյունքում գումարի վերադարձման գործարքը տարբեր գործարքներ են, որոնք արտացոլվում են քաղվածքում:

6.21. Քարտով կատարված գործարքները հաստատող փաստաթղթերի՝ Բանկում առկա պատճենները Քարտապանը կարող է ստանալ Բանկից՝ Բանկի սակագների համաձայն:

7. Վճարներ և գանձումներ

7.1. Քարտապանը վճարում է Բանկին քարտի սպասարկման հետ կապված Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարներ, եթե Բանկի և Քարտապանի միջև այլ համաձայնություն չի կայացվել:

7.2. Քարտի սպասարկման միջնորդավճարի առաջին վճարումը Քարտապանը կատարում է քարտը պատվիրելիս, իսկ հաջորդ վճարումները՝ Բանկի սակագներով սահմանված պարբերականությամբ՝ կանխավճարային կարգով:

7.3. Եթե հաճախորդը քարտից և այլ ծառայություններից օգտվում է աշխատավարձային նախագծի ներքո, ապա տվյալ քարտի և մյուս բանկային ծառայությունների վրա տարածվում են տվյալ աշխատավարձային նախագծի համար գործող, այդ թվում՝ համաձայնեցված կարգով և դեպքերում հետագա փոփոխություններով արտոնյալ պայմանները և սակագները:

7.4. Եթե Քարտապանն իր աշխատավարձն այլևս չի ստանում Բանկի միջոցով կամ որևէ հիմքով աշխատանքից ազատվել է, ապա Բանկն իրավասու է Քարտապանի համար ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնել աշխատավարձային նախագծի ներքո տրամադրված քարտի և մյուս բանկային ծառայությունների հատուկ սակագները և պայմանները և այդ պահից սկսած կիրառել Բանկում գործող քարտի և մյուս ծառայությունների սակագները և պայմանները կամ տվյալ քարտի, ծառայության կամ Քարտապանի համար Բանկի հայեցողությամբ կիրառելի այլ արտոնյալ կամ հատուկ սակագներ և պայմաններ:

7.5. Քարտով գործարքների իրականացման, ինչպես նաև Բանկի կողմից քարտի սպասարկման հետ կապված վճարների գանձման արդյունքում քարտի վճարային սահմանաչափը գերազանցելու դեպքում քարտային հաշվին ձևավորվում է գերածախս: Բանկի սակագներով սահմանված դեպքում և չափով Բանկը Քարտապանից գանձում է վճարային սահմանաչափը գերազանցելու տուժանք:

7.6. Բանկի սակագներով քարտի համար սահմանված միջնորդավճարները և քարտի սպասարկման հետ կապված այլ վճարները՝ ներառյալ քարտային հաշվին ձևավորված գերածախսը և տուժանքը, պարտավորությունները կազմող գումարները Բանկի կողմից գանձվում են անակցեպտ եղանակով՝ առանց Քարտապանի հանձնարարականի: Գանձումն առաջնահերթ կատարվում է քարտային հաշվից, իսկ քարտային հաշվին միջոցների բացակայության դեպքում՝ Քարտապանի՝ Բանկում ունեցած ընթացիկ կամ խնայողական հաշիվներից (այդ թվում՝ այլ արժույթով), իսկ դրանցում միջոցների բացակայության դեպքում՝ Քարտապանի՝ այլ քարտային հաշիվներից (այդ թվում՝ այլ արժույթով): Ընդ որում, Քարտապանը պարտավոր է ապահովել համապատասխան դրամական միջոցների առկայությունը Բանկում ունեցած իր բանկային հաշիվ(ներ)ին: Գանձվող պարտավորության գումարի և գանձման հաշվի արժույթների միջև տարբերության դեպքում Քարտերի սակագներով սահմանված՝ քարտի թողարկման, սպասարկման, վերաթողարկման կամ տրամադրման հետ կապված վճարները գանձվում են՝ փոխարկումը կատարելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված համապատասխան արժույթի միջին փոխարժեքով, իսկ քարտով/քարտային հաշվով իրականացված գործարքների հետ կապված բոլոր գանձումները՝ Բանկի կողմից տվյալ պահին սահմանված տվյալ արժույթի փոխարժեքով:

7.7. Չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից վերադարձվելուց հետո Բանկը մուտքագրում է քարտային հաշվին՝ նվազեցնելով չեղարկման համար պահումները (առկայության դեպքում): Անկախ չեղարկված գործարքի գումարի վերադարձման հանգամանքից և ժամկետից՝ Քարտապանը պետք է Բանկին վճարի կատարված գործարքի արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

7.8. Բանկը պատասխանատվություն չի կրում առևտրի/սպասարկման կետի կողմից մատուցված որևէ ծառայության դիմաց գանձված և Քարտապանի քարտային հաշվից ելքագրված վճարի համար:

8. Արժույթի փոխարկում

8.1. Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես քարտային հաշվի արժույթով, այնպես էլ քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով:

8.2. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքների հաշվառման համար գործարքի գումարը փոխարկվում է քարտային հաշվի արժույթի:

8.3. Գործարքի հաշվառման և գործարքի հավաստագրման փոխարժեքները կարող են տարբերվել:

8.4. Գործարքի հավաստագրման (կատարման) ժամանակ գործարքի գումարը փոխարկվում է քարտային հաշվի արժույթի՝ հետևյալ եղանակով.

8.4.1. Մուտքային գործարքի արժույթի փոխարկումը քարտային հաշվի արժույթի իրականացվում է տվյալ պահին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված՝ քարտային հաշվի արժույթի միջին փոխարժեք -2% փոխարժեքով, բացառությամբ ՌԴ ռուբլի արժույթով գործարքների, որոնց դեպքում՝ -20% փոխարժեքով,

8.4.2. Ելքային գործարքների դեպքում արժույթի փոխարկումը քարտային հաշվի արժույթի իրականացվում է տվյալ պահին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված՝ քարտային հաշվի արժույթի միջին փոխարժեք +2% փոխարժեքով, բացառությամբ ՌԴ ռուբլի արժույթով գործարքների, որոնց դեպքում՝ +20% փոխարժեքով:

Ընդ որում, միջազգային գործարքների դեպքում եթե գործարքը ԱՄՆ դոլարով չէ, նախքան սույն կետում նշված փոխարկումը, գործարքի արժույթը VISA/MasterCard վճարային համակարգի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ VISA/MasterCard համակարգի փոխարժեքով:

8.5. Գործարքի հաշվառման ժամանակ գործարքի գումարը փոխարկվում է քարտային հաշվի արժույթի՝ հետևյալ եղանակով.

8.5.1. ՀՀ տարածքում գործարքներ.

Քարտային հաշվի արժույթ	Գործարքի արժույթ	Փոխարկում[11]
ՀՀ դրամ	Այլ արժույթ	Գործարքի արժույթը փոխարկվում է քարտի արժույթի՝ գործարքի հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով, ընդ որում՝ ելքային գործարքների դեպքում փոխարկվում է վաճառքի փոխարժեքով, մուտքային գործարքների դեպքում՝ առքի:
ԱՄՆ դոլար/Եվրո	ՀՀ դրամ	Գործարքի արժույթը փոխարկվում է քարտի արժույթի՝ գործարքի հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով, ընդ որում՝ ելքային գործարքների դեպքում փոխարկվում է առքի փոխարժեքով, մուտքային գործարքների դեպքում՝ վաճառքի:

[11] Նշված բոլոր արժույթների համար Բանկը սահմանում է առքի և վաճառքի փոխարժեքներ:

8.5.2. Միջազգային գործարքներ[12] .

Քարտային հաշվի արժույթ	Գործարքի արժույթ	Փոխարկում[13]
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Գործարքի արժույթը փոխարկվում է քարտի արժույթի գործարքի հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով, ընդ որում՝ ելքային գործարքների դեպքում փոխարկվում է վաճառքի փոխարժեքով, մուտքային գործարքների դեպքում՝ առքի:
ՀՀ դրամ	Եվրո/ Այլ արժույթ	Գործարքի արժույթը VISA կամ MasterCard վճարային համակարգերի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի VISA կամ MasterCard համակարգերի փոխարժեքով (VISA քարտերի դեպքում այլ արժույթից ԱՄՆ դոլարի փոխարկումը ելքային գործարքների դեպքում կատարվում է VISA վճարային համակարգի փոխարժեք + 2%-ով, իսկ մուտքային գործարքների դեպքում՝ -2%), այնուհետև ԱՄՆ դոլարը փոխարկվում է քարտի արժույթի գործարքի հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով, ընդ որում՝ ելքային գործարքների դեպքում փոխարկվում է վաճառքի փոխարժեքով, մուտքային գործարքների դեպքում՝ առքի:
ԱՄՆ դոլար	Եվրո/ ՀՀ դրամ/ Այլ արժույթ	Գործարքի արժույթը VISA կամ MasterCard վճարային համակարգերի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի VISA կամ MasterCard համակարգերի փոխարժեքով (VISA քարտերի դեպքում այլ արժույթից ԱՄՆ դոլարի փոխարկումը ելքային գործարքների դեպքում կատարվում է VISA վճարային համակարգի փոխարժեք + 2%-ով, իսկ մուտքային գործարքների դեպքում՝ -2%):
Եվրո	ԱՄՆ դոլար	Գործարքի արժույթը փոխարկվում է քարտի արժույթի գործարքի հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով, ընդ որում՝ ելքային գործարքների դեպքում փոխարկվում է առքի փոխարժեքով, մուտքային գործարքների դեպքում՝ վաճառքի:
Եվրո	ՀՀ դրամ/ Այլ արժույթ	Գործարքի արժույթը VISA կամ MasterCard վճարային համակարգերի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի VISA կամ MasterCard համակարգերի փոխարժեքով (VISA քարտերի դեպքում այլ արժույթից ԱՄՆ դոլարի փոխարկումը ելքային գործարքների դեպքում կատարվում է VISA վճարային համակարգի փոխարժեք + 2%-ով, իսկ մուտքային գործարքների դեպքում՝ -2%), այնուհետև ԱՄՆ դոլարը փոխարկվում է քարտի արժույթի՝ գործարքի հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով, ընդ որում՝ ելքային գործարքների դեպքում փոխարկվում է առքի փոխարժեքով, մուտքային գործարքների դեպքում՝ վաճառքի:

8.6. Գործարքի գումարը քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

[12] Բացառությամբ Arca վճարային համակարգի հետ համագործակցող վճարային համակարգերում կատարվող գործարքների, որոնց դեպքում գործարքի գումարը փոխարկվում է քարտային հաշվի արժույթի՝ գործարքի հաշվառման պահին համապատասխան վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով:

[13] Նշված բոլոր արժույթների համար Բանկը սահմանում է առքի և վաճառքի փոխարժեքներ:

9. Քաղվածքներ

9.1. Բանկը ՀՀ օրենսդրությամբ և/կամ Քարտապանի հետ համաձայնեցված եղանակով Քարտապանին տրամադրում է քաղվածք ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Քաղվածք կարող է չտրամադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

9.2. Քաղվածքը համարվում է Քարտապանի կողմից ընդունված, եթե քաղվածքի ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում Քարտապանը չի ներկայացնում առարկություններ քաղվածքի վերաբերյալ:

10. Բողոքարկում

10.1. Քարտով իրականացված գործարքների վերաբերյալ առարկություններ կամ անհամաձայնություն ունենալու դեպքում Քարտապանը կարող է Բանկի կողմից սահմանված ձևով Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ ոչ ուշ, քան գործարքի կատարումից կամ ապրանքի առաքման/ծառայության մատուցման համար նախատեսված ամսաթվից 60 (վաթսուն) օրվա ընթաքում: Հայտի հետ անհրաժեշտ է ներկայացնել բողոքարկվող գործարքի հետ կապված փաստաթղթերը և Բանկի պահանջով՝ այլ տեղեկություններ կամ փաստաթղթեր: Նշված ժամկետից հետո Քարտապանի կողմից ներկայացված բողոքարկման հայտը Բանկը դիտարկում է ՀՀ օրենսդրությամբ, վճարային համակարգերի կողմից և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

10.2. Առևտրի/սպասարկման կետում կատարված գործարքի չեղարկումից հետո Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել բողոքարկման հայտ, եթե չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից չի վերադարձվել տվյալ առևտրի/սպասարկման կետի կողմից սահմանված ժամկետում կամ հետևյալ ժամկետում՝

10.2.1. ՀՀ տարածքում կատարված գործարքների համար՝ չեղարկման օրվանից 10 (տասը) օր,

10.2.2. ՀՀ տարածքից դուրս կատարված գործարքների համար՝ 30 (երեսուն) օր:

10.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով ընդունելի սահմաններում օժանդակել Քարտապանի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

10.4. Առևտրի/սպասարկման կետում իրականացված գործարքի բողոքարկումը չի հանդիսանում Բանկի նկատմամբ բողոքի կամ բողոք-պահանջի ներկայացում, և Բանկի դերակատարումը սահմանափակվում է համապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:

10.5. Եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ Քարտապանի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, Քարտապանից գանձվում է Բանկի սակագներով սահմանված վճար:

10.6. Բողոքարկման հայտի պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է հետևյալ ժամկետներում՝

10.6.1. ArCa վճարային համակարգում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 40 (քառասուն) օրվա ընթացքում,

10.6.2. միջազգային վճարային համակարգերում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում,

10.6.3. Բանկի բանկոմատներով կատարված կանխիկ գումարի մուտքագրման կամ ելքագրման գործարքների բողոքարկման դեպքում (եթե բանկոմատը չի տրամադրել կանխիկ գումարը, սակայն այն նվազեցվել է քարտային հաշվից, կամ Քարտապանը մուտքագրել է կանխիկ գումար, սակայն քարտային մնացորդը չի ավելացել) հայտի ստացման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

10.7. Անհպում գործարքների բողոքարկման դեպքում Բանկը հատուցում է Քարտապանի հաշվից դեբետագրված միջոցները Քարտապանի բողոքարկման հայտը ստանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում՝ պայմանով, որ պահպանվել են քարտի օգտագործման և անվտանգության կանոնները, իսկ նշված կանոնները պահպանված չլինելու դեպքում բողոքարկման հայտի պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է Պայմաններով սահմանված ժամկետում:

11. Հավելյալ քարտ

11.1. Քարտապանը (Հիմնական քարտապան) կարող է իր քարտին (հիմնական քարտ) կից Բանկից ստանալ հավելյալ քարտ(եր) ինչպես իր համար, այնպես էլ երրորդ անձի համար:

11.2. Հավելյալ քարտը կարող է տարբեր լինել հիմնական քարտի տեսակից, սակայն պետք է քարտի դասով լինի հիմնական քարտին հավասար կամ ավելի ցածր դասի: Հավելյալ քարտը կարող է պատվիրվել Ստիկերի տարբերակով:

11.3. Վարկային քարտին կից տրամադրվում է բացառապես վարկային հավելյալ քարտ:

11.4. Հավելյալ քարտը թողարկվում է տվյալ քարտատեսակի համար Բանկի սակագներով սահմանված ժամկետով՝ անկախ հիմնական քարտի գործողության ժամկետից:

11.5. Հավելյալ քարտի համար առանձին քարտի գաղտնաբառ չի կիրառվում: Հավելյալ քարտով՝ քարտի գաղտնաբառի կիրառմամբ նախատեսված գործողություններն իրականացվում են Հիմնական քարտապանի կողմից՝ հիմնական քարտի գաղտնաբառով:

11.6. Հավելյալ քարտը առաքման եղանակով տրամադրելու դեպքում, եթե սույն Պայմանների համաձայն քարտի ակտիվացման նպատակով քարտի և PIN կոդի ստացումը հաստատելու համար նախատեսված է Բանկի և Քարտապանի միջև կապի հաստատում, ապա դա պետք է տեղի ունենա Բանկի և Հիմնական քարտապանի միջև:

11.7. Հավելյալ քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական քարտի քարտային հաշվում:

11.8. Հիմնական քարտով և հավելյալ քարտ(եր)ով կատարված գործարքների հանրագումարը չպետք է գերազանցի հիմնական քարտի համար սահմանված վճարային սահմանաչափը:

11.9. Հիմնական քարտապանը յուրաքանչյուր հավելյալ քարտի համար կարող է սահմանել առանձին ամսական վճարային սահմանաչափ:

11.10. Հիմնական և հավելյալ քարտերով իրականացված բոլոր գործարքների արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները հանդիսանում են Հիմնական քարտապանի պարտավորությունները:

11.11. Հավելյալ քարտի գործողության ժամկետն ավարտվելու հիմքով հավելյալ քարտը Բանկի կողմից վերաթողարկվում է սույն Պայմաններով նախատեսված կարգով: Վերաթողարկված հավելյալ քարտը Բանկի կողմից կարող է տրամադրվել Հավելյալ քարտապանին՝ առանց Հիմնական քարտապանին նախապես տեղեկացնելու:

11.12. Հավելյալ քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) տեղեկացնել Բանկին Հիմնական քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկության դեպքերում և չօգտագործել քարտը նման տեղեկատվություն ունենալու դեպքում:

11.13. Ստիկերները նախատեսված չեն համացանցում գործարքներ իրականացնելու համար, ինչպես նաև նախատեսված չեն փակցման այնպիսի իրերի (այդ թվում՝ հեռախոսներ և այլն) արտաքին մակերեսին, որոնք ունեն հատուկ պաշտպանական մետաղական (ռադիոէկրանացված) մաս:

12. Քարտի փակում

12.1. Բանկն իրավասու է սույն Պայմաններով և Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանիորեն դադարեցնել քարտի գործողությունը (փակել քարտը) և/կամ փակել քարտային հաշիվը հետևյալ դեպքերում՝

12.1.1. եթե Քարտապանն ունի քարտի հետ կապված Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ, որոնք արտացոլող քաղվածքը Քարտապանի կողմից ստանալու օրվանից անցել է 30 (երեսուն) օր և ավել,

12.1.2. եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ այլ չմարված պարտավորություններ,

12.1.3. Քարտապանի մահվան, սնանկության դեպքերում՝ այդպիսի փաստերի մասին պատշաճ/հիմնավոր ծանուցման հիման վրա,

12.1.4. Պայմաններով, Բանկի հիմնական պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

12.2. Քարտը փակելիս այդ քարտի բոլոր հավելյալ քարտերը ևս փակվում են:

12.3. Քարտի փակման դեպքում Քարտապանը պետք է քարտը, ինչպես նաև քարտային փաթեթը (առկայության դեպքում) վերադարձնի Բանկ:

12.4. Բանկի նախաձեռնությամբ քարտը փակելու դեպքում Բանկը կարող է պահանջել Քարտապանից մարել քարտի հետ կապված Բանկի նկատմամբ բոլոր պարտավորությունները:

12.5. Քարտապանը կարող է միակողմանիորեն դադարեցնել քարտի գործողությունը և փակել քարտային հաշիվը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և մարելով քարտի հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ:

12.6. Հավելյալ քարտը կարող է փակվել ինչպես Հիմնական քարտապանի, այնպես էլ Հավելյալ քարտապանի կողմից:

12.7. Քարտի և (կամ) քարտային փաթեթի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում:

12.8. Քարտի փակումը չի դադարեցնում քարտի հետ կապված Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները՝ ներառյալ հաշվարկված տոկոսները և տուժանքները:

12.9. Քարտապանը պարտավոր է մարել նաև քարտով կատարված այն գործարքների արդյունքում ձևավորված պարտավորությունները, որոնք կատարվել են նախքան քարտի փակումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել քարտի փակումից հետո:

12.10. Քարտի փակումից հետո 3 (երեք) աշխատանքային օր հետո քարտով կատարված բոլոր գործարքների ձևակերպումից հետո քարտին դրական մնացորդի առկայության դեպքում Բանկը փոխանցում է մնացորդի գումարը Քարտապանի՝ Բանկում ունեցած այլ հաշվին ստորև նշված հերթականությամբ՝ ըստ հաշվի առկայության՝

12.10.1. նույն արժույթով ընթացիկ հաշվին,

12.10.2. նույն արժույթով այլ քարտային հաշվին,

12.10.3. ՀՀ դրամով ընթացիկ հաշվին,

12.10.4. ՀՀ դրամով այլ քարտային հաշվին,

12.10.5. այլ արտարժույթային ընթացիկ հաշվին,

12.10.6. այլ արտարժույթային քարտային հաշվին:

Իսկ եթե Քարտապանը Բանկում այլ հաշիվ չունի, ապա քարտային հաշվի հետագա սպասարկումն իրականացվում է՝ համաձայն Բանկի ընթացիկ հաշիվների սպասարկման համար սահմանված սակագների, և հաշիվը փակվում է, երբ հաշվի մնացորդը զրոյանում է: